ՄԵԴԻԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա. Մ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

ԴԱՆԻԵԼՅԱՆ Գ. Լ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

Սոցիալական հաղորդակցման կարողությունների զարգացման արդիականությունը պայմանավորված է հասարակության՝ սոցիալապես ակտիվ անհատի ձևավորման պահանջմունքով: Ամբողջ աշխարհում խոսքի և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների թիվը գնալով ավելանում է՝ կենդանի շփման պակասի, այդ շփումը թվային տեխնոլոգիաների դաշտ և մեդիամիջավայր տեղափոխելու հետևանքով: 21-րդ դարում հրատապ է դարձել մանկահասակ երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրը և այն մշտապես արդիական է:

Սոցիալական հաղորդակցումն այս կամ այն լեզվի կիրառումն է: Այն ներառում է սոցիալական փոխներգործությունը, սոցիալական ճանաչումը և խոսքային նյութի մշակումը: Անձի սոցիալիալական հաղորդակցման զարգացման հարցը միշտ եղել է փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների և սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Մանկահասակ երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման կարողությունների ձևավորման արդիականությունը պայմանավորված է արտաքին միջավայրի հետ արդյունավետ փոխներգործելու ընդունակությունների զարգացմամբ: Մինչ մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման կարողությունների ձևավորման առանձնահատկությունների դիտարկումը, հարկ ենք համարում հասկանալ՝ ինչպիսի անձնային որակներ են կրում սոցիալապես ակտիվ երեխաները, չէ՞ որ նրանց գործունեությունն ու անկախությունը ամբողջ դիդակտիկ համակարգի հիմնական սկզբունքներից մեկն է: Այդ նպատակով վերլուծենք մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման կարողությունների զարգացումը նորմայում և մեդիակրթության տեսանկյունից, պարզենք նրանց սոցիալական հաղորդակցման էությունը, որոշակիացնենք սոցիալական հաղորդակցման հմտությունների ձևավորմանն ուղղված աշխատանքների բնույթը:

«Հաղորդակցում» եզրույթն ըստ Harper Douglas: «communication»: Online Etymology Dictionary աղբյուրի, ծագել է լատիներեն «communico» բառից, որը նշանակում է՝ դարձնում եմ

ընդհանուր, կապում եմ, շփվում եմ, իսկ հաղորդակցման նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով և միջոցներով [6, 256]: Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով՝ խոսք, մարմնի լեզու, դիմաղաղ, մամուլի կամ էլեկտրոնային փոստի մեդիա հաղորդագրություններով՝ համակարգիչ, հեռախոս, ռադիո, հեռուստատեսություն: Հենց այս աղբյուրներից երեխաները լսում, տեսնում և վերցնում են տեղեկատվությունը, ինչն էլ որոշակի բառապաշարով, քերականական ճիշտ կամ սխալ կառույցով, կապակցված կամ ոչ կապակցված խոսքով փոխանցում շրջապատին: Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում [3, 81-105]: Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել: Դա նշանակում է, օգտագործելով սեփական լեզվամտածողությունը, լեզուն և խոսքը, հաղորդակցման հոգեբանական ունակությունները, կառուցել այս կամ այն բնույթի փոխհարաբերություններ [5, 869-872]: Հաղորդակցման կարողություններ ասելով հասկանում ենք տարբեր իրավիճակներում երեխաների արագ կողմորոշումն ու վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցների ազատ կիրառումը: Մեր պրակտիկ փորձի ընթացքում, հատկապես վերջին տասնամյակում հաճախ ենք հանդիպում երեխաների, որոնց ընտանիքներում չի կարևորվում երեխայի կենդանի հաղորդակցման կարողությունների զարգացումը, քանի որ այն լիովին փոխարինվել է մեդիամիջավայրով: Սույն հանգամանքը մեզ թույլ է տալիս ևս մեկ անգամ հիմնավորել Լ. Ս. Վիգոտսկու այն միտքը, ըստ որի՝ երեխայի խոսքը ձևավորվում է սոցիալական շփման մեջ, ակտիվ խոսքային միջավայրում: Հայտնի է, որ մեդիամիջավայրում շրջանառվող մեդիաարտադրանքի հիմնական լեզուն անգլերենն է, ուստի այսօր, հայ երեխան գրեթե զրկված լինելով մայրենի լեզվով կենդանի շփումից, ունենում է լեզվամտածողության շեղումներ, խոսքի զարգացման հապաղումներ, հասակակիցների հետ հուզական շփում ստեղծելու անկարողություն: Մյուս կողմից լինելով միջազգային լեզու՝ անգլերենը մեդիամիջավայրում ապահովում է տարբեր ազգությունների պատկանող երեխաների միջև փոխըմբռնելի հաղորդակցում, նպաստելով միմիանց ճանաչմանն ու մերձեցմանը: Հատկապես այսօր, երբ առավել տարածված ցանցային խաղերը, մուլտֆիլմերը, երգերը և այլ բովանդակության մանկական մեդիաարտադրանքը, ինչպես արդեն նշեցինք, հիմնականում անգլերեն է, դրանց միաժամանակյա ակընդրման և ունկընդրման պայմաններում, մանկահասակ երեխաները, համադրելով ձայնն ու պատկերը, կարողանում են հեշտությամբ յուրացնել օտար լեզուն: Երեխաների կողմից օտար լեզվի ընկալումն ու յուրացումը նորագույն

տեխնոլոգիաների հետ պարբերաբար առընչվելու պայմաններում դարձնում է այն հետաքրքիր և աշխույժ, մեծացնում է նրանց ակտիվությունն ու այդ լեզուն սովորելու շարժառիթը[7, 75-85]:

Այս պարագայում, երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման կարողությունների զարգացման համար նպատակահարմար է ինչպես մայրենի լեզվի, այնպես էլ անգլերենի բառապաշարի հարստացումը զգացմունքներ և հույզեր արտահայտող բառերով, քանի որ սոցիալական հաղորդակցման ընթացքում կիրառվող բանավոր խոսքը ունի բարդ փոխներգործություն և այն հարկավոր է լեզվի արտահայտման ու ընկալման համար միաժամանակ: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել հատկապես մեր օրերում, երբ մեդիատեխնոլոգիաների միջոցով հաղորդակցումն առավել արդիական է դառնում [4, 216]: Վերոնշյալի համար գոյություն ունի ընդունված նորմերի լայն շրջանակ՝ կախված երեխայի անձի անհատական առանձնահատկություններից, ընտանիքից և, իհարկե, ազգային պատկանելիությունից:

Ելնելով 21-րդ դարի մարտահրավերներից և մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման հմտությունների արդյունավետ ձևավորման անհրաժեշտությունից, դիտարկենք այդ գործընթացի առանձնահատկություններն ու դրանց հաշվառմամբ ակնկալվող արդյունքները:

Նախ ասենք, որ գերակշիռ պետք է լինի կենդանի շփումը ծնողների և հասակակիցների հետ, որպեսզի երեխան մտածի հայերեն և տիրապետի մայրենի լեզվին, սակայն հնարավոր չէ նսեմացնել կամ բացառել մեդիամիջավայրի դերն ու նշանակությունը երեխայի կողմից օտար լեզուների, մասնավորապես անգլերենի ընկալման և յուրացման, այդ լեզվով տարբեր իրավիճակներում և միջավայրերում հաղորդակցվելու, խոսքային և ոչ խոսքային ակտիվություն դրսևորելու գործընթացում: Նմանօրինակ համադրությամբ մանկահասակ երեխաների լեզվամտածողության և հաղորդակցման հմտությունների ձևավորումը հնարավորություն է ընձեռում նրանց ճանաչել, ինչպես մայրենի, այնպես էլ անգլերեն լեզուներով ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, բացատրել և մեկնաբանել դրանք: Այս պարագայում երեխաները ունակ են դառնում կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ինքնուրույն ձևակերպում են սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք կամ վերաբերմունք որևէ երևույթի վերաբերյալ, կարողանում են հաղորդակցվել և արտահայտել իրենց ցանկությունները:

Ծնողների և հասակակիցների հետ ակտիվ շփման և մեդիամիջավայրում ձեռք բերված ազգային լեզվամտածողության և անգլերենի համապատասխան մակարդակի իմացության արդյունքում, երեխաները ձևավորում են նաև ճանաչողական և դրդապատճառային բնույթի հաղորդակցման կարողություններ, որոնց շնորհիվ նրանք ընդունակ են տեսնել երևույթների և

իրադարձությունների միջև առկա պատճառահետևանքային կապերը, դրսևորել ակտիվություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ, ներգրավվելով գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ:

Մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողության և հաղորդակցական կարողությունների ձևավորման առանձնահատկություններից է նաև ինքնաճանաչումը: Երեխաները ճանաչում են իրենց արտաքին առանձնահատկությունները, ոչ միայն հայելու միջոցով, ինչպես նախկինում էր, այլ առավելապես մեդիատեխնոլոգիաների կիրառմամբ, տարբեր սոցիալական հարթակներում իրենց ուղիղ եթերների /live/կամ նկարների /foto/ միջոցով, այլ հաճախ նաև առցանց խաղերում, այս կամ այն հերոսին ընտրելով, սեփական արտաքին հատկանիշներով նրան օժտելով և ձեռք բերելով նաև սեռադերային պատկերացումներ [1, 187]: Այս ամենը մեծապես նպաստում է, որ երեխաները պատկերացում կազմեն իրենց հաղորդակցական հնարավորությունների մասին, ձևավորեն վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ, ունակ լինեն ինքնակազմակերպվելու, ինքնուրունություն և ինքնասպասարկման հմտություններ դրսևորելու:

Մայրենի և որևե այլ օտար լեզվով, մասնավորապես անգլերենով առերես և մեդիամիջավայրում հաղորդակցվելու կարողությունները երեխաներին հնարավորություն է տալիս նաև ճանաչելու սեփական և այլոց հույզերն ու զգացմունքները: Նրանք ունակ են դառնում ճանաչելու մեծահասակների և հասակակիցների հետ փոխհարաբերություններում սահմանված ինչպես ազգային, այնպես էլ անգլյացիների մոտ ընդունված վարքային կանոնները և դրսևորում են սահմանված նորմերին համապատասխան վարք, արդյունքում, շփման մեջ դառնում են նախաձեռնող և կառուցողական, դրսևորում են ընկերակցելու և համագործակցելու միտվածություն: Երեխաների հաղորդակցական կարողությունների ձևավորման վրա մեդիամիջավայրի առանձնահատուկ ներգործության արդյունք է նաև հայրենիքի և աշխարհի Ճանաչումը, սեփական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տարրական գիտելիքների յուրացումը, ստեղծագործելը, երևակայելը, երազելը, իրական և վիրտուալ աշխարհները միմիանցից տարբերելը, մեդիա գործիքներից օգտվելը, գեղեցիկը գնահատելը, հայրենի և արտասահմանյան հանրահայտ մանկագիրների գեղարվեստական ստեղծագործություններն ու հեքիաթները, դրանց սյուժեներով ստեղծված մուլտֆիլմերն իմանալը, արվեստի միջոցով և մայրենի և անգլերեն լեզուներով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

Այսպիսով, մեդիամիջավայրում երեխաների լեզվազվամտածողության և հաղորդակցման կարողությունների ձևավորման առանձնահատկությունների դիտարկման

արդյունքում կարող ենք եզրակացնել, որ այն բազմակողմանի ու բարդ գործընթաց է, մշտապես եղել և գտնվում է գիտության տարբեր ոլորտների՝ մանկավարժության, մեդիակրթության, հոգեբանության, հոգելեզվաբանության, լեզվաբանության, լեզվի դասավանդման մեթոդիկայի մասնագետների հետաքրքրությունների կիզակետում: Գլխավոր հարցը, որ քննվում է այս բնագավառների մասնագետների կողմից, հետևյալն է. մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողությունը և հաղորդակցական կարողությունը ձևավորվում և դրսևորվում են գիտակցականի՞, թե՞ ենթագիտակցականի մակարդակում: Մենք գտնում ենք, որ թվային աշխարհում, դրանց ձևավորումն ու դրսևորումը տեղի է ունենում գիտակցականի և ենթագիտակցականի փոխպայմանավորվածության պայմաններում՝ միաժամանակ ընդունելով նաև Վ. Ա. Բոուսֆիեդի, Գ.Ա. Վիտմարչի և Հ. Բերկովիչի այն թեզը, որ լեզվամտածողության մեկնաբանման մեջ մտածողություն բառը հանդես է գալիս ոչ թե իր գլխավոր՝ իմացական այլ ավելի նեղ, հուզական և զգացական առանձնահատուկ իմաստով, ձեռք բերելով մայրենի լեզվում անսխալ կողմնորոշվելու, մեդիամիջավայրի հիմնական լեզուն՝ անգլերենը հասկանալու և դրանցով անկաշկանդ հաղորդակցվելու կարողություն [2, 233-238]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկյան Ա.Մ., Մուրադյան Հ.Ս., Մեդիակրթություն/ուսումնամեթոդական ձեռնարկ/., «Զանգակ» հրատ, Երևան-2017, 282 էջ:

2. Bousfield W.A., Whitmarch G.A., Berkowitz H., Partial responses identities in associative clustering, J. of general psychology, v. 63, 1960, pp. 233-238.

3. Campbell L., The History of Linguistics, The Handbook of Linguistics, «Mark Aronoff. Blackwell», 2001, pp. 81 – 105.

4. Cofer Sh. N., Associative commonality and rated similarity of certain words from Hagen's list, Psychological reports, v. 3, 1957, pp. 603 – 606. Deese J., The structure of associations in language and thought. Baltimore, «J.Hopkins press», 1966, pp. 216.

5. Dolinsky V.A., Quantitative Model for Word Association Data, SPECOM'2007, the XIIth Inter. Conf. —Speech and Computer‖, Proc., V. II. M., 2007, pp. 858–866. Enard W., Przeworski M., Fisher .S, Lai C, Wiebe V ., Kitano T., Monaco A., Pääbo S., Molecular evolution of FOXP2, a gene involved in speech and language, Nature, 418(6900), 2002, pp. 869 – 872

6. Gardner H., Truth, beauty, and goodness reframed: Educating for the virtues in the 21st century, New York: Basic Books, 2011, 256 p.

7. Howes D., On the relation between the probability of a word as an association and in general

verbal usage, J. of abnormal and social psychology, v. 54, 1957, pp. 75-85.

FEATURES OF CHILDREN'S LANGUAGE AND COMMUNICATION CAPACITIES IN THE MEDIA ENVIRONMENT

The article presents the results of observing the peculiarities of children's language thinking and communication skills development in the media environment, based on which we conclude that it is a multifaceted and complex process that has always existed in various fields of science: pedagogy, media education, psychology, linguistics, linguistics, linguistics, linguistics. in the focus of specialists' interests. There is a belief that the main issue being examined by experts in these fields is that in the digital world, the development and manifestation of children's language thinking and communication skills takes place in the conditions of conscious and subconscious mutual agreement.

Keywords: *media education, children, language thinking, social communication, media technologies, body language, psycholinguistics, family .*